ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՆԿՅՈՒՆԱՔԱՐ
SPECIAL TOPIC: CORNERSTONE

I. ՀԿ կիրառությունը

Ա. Քարի գաղափարը, որպես ամուր, դիմացկուն առարկա, որը լավ հիմք էր հանդիսանում, գործածվում էր նկարագրելու համար ՅԱՀՎԵԻՆ (տես՝ Սաղմ.18:2):
Բ. Ապա այն վերածվեց Մեսիական տիտղոսի՝ անվան (տես՝ Ծննդ.49:24, Սաղմ.118:22, Ես.28:16):
Գ. Այն եկավ ներկայացնելու Մեսիայի միջոցով ՅԱՀՎԵի դատաստանը (տես՝ Ես.8:14 Դան. 2:34-35, 44-45):
Դ. Սա վերածվեց շինության փոխաբերության՝
1. մի հիմնաքարի, որը առաջինն են դնում, որը ապահով է և ամբողջ շինության անկյունները դրա միջոցով է ուղղվում, և կոչվեց «անկյունաքար»
2. այն կարող է նաև վերաբերել վերջին քարին, որ դրվում է շինության մեջ իր տեղը, որը իրար է միացնում պատերը (տես՝ Զաք.4:7, Եփես.2:20,21), որը կոչվում է «գլխավոր քար»՝ Եբրայերեն *rush* (այսինքն՝ գլուխ) բառից:
3. այն կարող է վերաբերել «բանալի՝ հիմնական քարին», որը դռան կամարի մեջտեղում էր դրվում և պահում էր ամբողջ պատի ծանրությունը:

II. ՆԿ կիրառությունը

Ա. Իր մասին խոսելիս մի քանի անգամ Հիսուսը մեջբերեց Սաղմոս 118-ից (տես՝ Մատթ. 21:41-46; Մարկ.12:10-11; Ղուկ.20:17):
Բ. Պողոսը գործածում է Սաղմոս 118-ը՝ անհավատ, ապստամբ Իսրայելին ՅԱՀՎԵի մերժման հետ կապված (տես՝ Հռոմ.9:33):
Գ. Պողոսը կիրառում է «անկյունաքարի» գաղափարը Եփես.2:20-22, վկայակոչելով Քրիստոսին:
Դ. Պետրոսը կիրառում է Հիսուսի մասին այս հասկացությունը 1 Պետ.2:1-10: Հիսուսը անկյունաքարն է և հավատացյալները կենդանի քարերն են (այսինքն՝ հավատացյալները որպես տաճարներ, տես՝ 1 Կորնթ.6:19) կառուցված Նրա վրա (այսինքն՝ Հիսուսը նոր Տաճարն է, տես՝ Մարկ.14:58; Մատթ.12:6; Հովհ.2:19-20): Հրեաները մերժելով Հիսուս Մեսիային մերժեցին իրենց հավատքի հենց հիմքը:

III. Աստվածաբանական սահմանումներ

Ա. ՅԱՀՎԵՆ թույլատրեց Դավթին, Սողոմոնին կառուցելու տաճար: Նա ասաց նրանց, որ եթե նրանք պահեն ուխտը, Նա կօրհնի նրանց և նրանց հետ կլինի (տես՝ 2 Թագ. 7), սակայն եթե նրանք չպահեն, ապա տաճարը կավերվի (տես՝ 3 Թագ. 9:1-9):

Բ. Ռաբբիական հուդայականությունը կենտրոնացել էր ձևի և ծեսերի վրա, անտեսելով անձնական հավատքի ասպեկտը (տես՝ Երեմ.31:31-34; Եզեկ.36:22-38): Աստված փնտրում է ամենօրյա, անձնական, աստվածահաճո փոխհարաբերություն Իր պատկերով ստեղծված մարդկանց հետ (տես՝ Ծննդ.1:26-27): Ղուկ. 20:17-18 պարունակում է դատաստանի սարսափելի խոսքեր, ինչպես և Մատթ. 5:20, որն ուղղված է հուդայականությանը:

Գ. Հիսուսը կիրառեց տաճարի գաղափարը ներկայացնելու Իր ֆիզիկական մարմինը (տես՝ Հովհ.2:19-22): Այն շարունակվում է և ընդլայնում Հիսուսի վրա եղած անձնական հավատքի գաղափարը, քանի որ Մեսիան է հանդիսանում ՅԱՀՎԵի հետ փոխհարաբերության ճանապարհը (այսինքն՝ Հովհ.14:6, 1 Հովհ.5:10-12):

Դ. Փրկության նպատակն է մարդկանց մեջ վերականգնելու Աստծո ապականված պատկերը (Ծնն.1:26-27 և գլուխ 3), որպեսզի Աստծո հետ փոխհարաբերությունը հնարավոր դառնա: Քրիստոնեության նպատակը Քրիստոսակերպությունն է: Հավատացյալները պետք է դառնան կենդանի քարեր (այսինքն՝ փոքր տաճարներ կառուցված Քրիստոսի վրա՝ Նրա թողած օրինակով, տես՝ 1 Կորնթ. 6:19):

Ե. Հիսուսն է մեր հավատքի հիմքը և մեր հավատքի անկյունաքարը (այսինքն՝ Ալֆան և Օմեգան): Մինչդեռ Նա նաև գայթակղության քարը և անարգված քարն է: Կորցնել Նրան նշանակում է կորցնել ամեն բան: Այստեղ չկա ձեռնպահ՝ չեզոք դիրք: